

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie

مجموعه علوم

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Հ. ԲՈԼԱՏ

Գ. ՇՐՋԱՆ

Թիֆ 72

1899 ՕԳՈՍՏՈՍ 19

H. POLAD, Rédacteur en chef du journal

HANRAKIDAK

19. Rue Eski-Zabtié Dar el-Ekber
Constantinople
Turquie

در علیہدہ بنفجہ قیوسندہ اسکی ضبطیہدہ ۱۹
نومرولی دکاندہ (حاضر ایداک) مجموعہ علوم
غز تہ سی سر محرری (بولاد) افندیہ

ԲՈԼԱՏ ԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ղ. Բ. — Ուղերձ Առ Օդ. Սուլթան ՀԱՄԻՏ
Բ. Վեհափառ Կայսր Թուրքիոյ :
Պաշտ. Յայտ. Ազգ. Պատրիարքարանի :
Ղ. Բ. — Յարգանք Տ. Դրեդորֆիոս Արքեպիս-
կոպոս Ալեքսանդրեանի Յիշատակին :
Տիրայր Վարդ. Հոգեւոյս Սրբազանին մէկ
Հառաչք :
Դ. Խաչկոնց. — Ժողովրդ. Բանահիւսութիւն.
Ղ. Բոլատ. — Հողագիտական, մաւր, մոխիր
եւ ոսկոր :
Ս. Դասապեան — Սկզբունք շարադրութեան
Ղ. Բոլատ. — Արհեստագիտական :
Թերթոն, Կարեւոր ազդ., Լէն.

Թուրքիոյ համար տարեկան 50 շրջ.

Հասը 40 փարայ

» » վեցամսեայ 26 »

» » եռամսեայ 13 »

Արտասահման տարեկան 15 Ֆր.

կամ 6 րուպլ.

Դրամի տեղ կ'ընդունուի նամակի

գրողմանթուղթ, 50 հատ 1 շրջ. նոց

գրողմանթուղթ, 50 շրջի փոխարէն.

باب عالی جاده سنده ۴۰ نومرولی معلومات — طاهر بك مطبعه سنده طبع اولمشدر .

Տպագրութիւն «ՄԱԼԻԻՄԱԹ»

Կ. Պոլիս, Պապ-Ալի ճատտէսի, Թիւ 40

W. J. P. 4 5 0 3

1 6 4 4 7

Thompson & Thompson

Encyclopedia
of the
United States

1890

W. J. P. 4 5 0 3

1 6 4 4 7

Thompson & Thompson

Encyclopedia

of the


United States

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 72

1899 ՕԳՈՍՏՈՍ 19



23րդ ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՕԳՈՍՏ. ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.

ՎԵՋԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ ԹՈՒՐԲԻՈՅ

Ամենուրեք, ծովերու և ցամաքներու վրայ, ուր կը ծածանի Օսմանեան աշխարհաժառանգ Պետութեան յաղթապանժ Մահիլը, իր ահեղաշուք հովանոյն տակ արտասովոր ոգեւորումով և խանդավառութեամբ տօնուեցաւ մեր սիրեցեալ Վեհապետին 23րդ Գահատօնը։ Թէ՛ Իսլամ թէ՛ Քրիստոնեայ ժողովուրդը միահամուռ, իբրեւ եղբայր, իբրեւ միեւնոյն ժողովրդասէր Հօր մը զաւակները, համերաշխ միարանութիւնով, երախտագիտութիւնով, երախտա-

գիտութեան, հաւատարմութեան և շնորհակալութեան զգացումներով ու մտածումներով առլցուած, գոհարանական ու զերձներով փառաւորեցին Օգոստ. Սուլթան Համիտ Բ. Կայսրն, որ ի սկզբանէ անտի իր ընդոծին քառաքինութեամբ ու կորովամտութեամբ գիտցած և փափաքած է իւրիւ ճշմարիտ և առատագութ Վեհապետ, հալարաւոր, բիւրաւոր, միլիոնաւոր բազմազգի ժողովուրդը խնամել իւրիւ Հայր, և անոնց բարդաւաճման ու զարգացման համար չինայել ամէն կարելի եղած ջանք, որով բոլոր իր երկրին ու ժողովրդին երջանկութիւնն ու խաղաղութիւնն աւելի ապահով և հաստատ հիմերու վրայ խարսխեց: Այսօր ամէն ժամանակէ աւելի, համայն թուրքիա իր հանճարեղ ինքնակալին ահեղաշուք հովանոյն տակ, իր կրթական, գիտական, արուեստային ու ճարտարարուեստային հանրօգուտ հաստատութիւններով կը պարծի, կը փայլի ու կը բարգաւաճի օրքան զօր, միացնելով ատոնց՝ Պետութեան ցամաքային և ծովային զինւորական ուժերը, որոնք եւրոպական ամէնէն աւելի զարգացած ազգերու ոճերով կազմակերպուած, նոյն խել եւրոպական պետութեանց խորին գնահատումներուն արժանացած են:

Մեր սիրեցեալ Վեհապետին այս 23րդ երջանկաւետ Գահատօնին առթիւ, Հայ Ազգը բիւրիցս երախտագէտ, իր ամէնէն փաւերական հաւատարմութեան հաւաստին կը մատուցանէ յատու գահոյից Ն. Օգոստ. Կայսեր Սուլթան ՀԱՄԻՏ Բ. ին, որ ամէն ատեն, ինչպէս Յաղթապանծ Յաթիհէն սկսեալ, միշտ Օսմ. աշխարհածաւալ Պետութեան Վեհաշուք, Վեհօգլ Սուլթաններէն հպատակային առանձնաշնորհումներ վայելած է իւրիւ երկրին հարազատը, և կրցած է ցայսօր՝ Անոր հզօր և հպատակատէր հովանոյն տակ իր գոյութիւնը պահել անվթար:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ՝ հանրային Մամլոյն հետ միասին; որու հայազգի և օտարազգի բոլոր ներկայացուցիչները մին զքան միւսը գերազանցող ներբողականներով հանրային խնդակցութեան ու շնորհաւորութեան զգացումները արտայայտեցին մեր Օգոստոսիառ ինքնակալին, ինքն ևս արձագանգ ու թարգման կը հանդիսանայ այս տիեզերական խնդակցութեան, ու ամէնուն հետ իր և իր Ազգին սրտին խորերէն կը մաղթէ շատ ու շատ երջանկաւետ Գահատօններ:

Մեր անզուգական Վեհապետին

ՕԳՈՍՏ. ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ



Յառաջիկայ Հինգաբքի օր, 19 ամսոյս, Օգոստոսիս Սուլթանին Գահակալութեան արեղարձն լինելով, նոյն օրն հանդիսաւոր բարեմադրութիւնք տեղի պիտի ունենան Մայր եկեղեցւոյ մէջ, վասն արեւաւոսութեան եւ քանկագին կենաց նորին Կայսերական Վեհափառութեան:


Ուստի, կը հրաւիրուին Մայրաքաղաքիս մէջ գտնուող Սրբազան Եպիսկոպոսոնք, Ա. Եկեղեցեաց Քարոզիչք, Վարդապետք, Աւագերեցոնք եւ Քահանայք, Աստիճանաւորք եւ ընդհանուր ու վարչական ժողովոց եւ տնտեսութեանց, քաղ. խորհրդոց եւ Հոգաբարձութեանց անդամք, նոյն օրն, առաւօտեան ժամ Յին ներկայ գտնուիլ ի Պատրիարքարանս, իբրեւ հրաւիրագիր նկատելով ներկայ յայտարարութիւնն:

Կոստանդնուպոլիս 15 Օգոս. 99

ԿՆԻԲ

Պատրիարքարանի

ՅԱՐԳԱՆՔ



Տ. ԳՐԻԳՈՐ ԱՐԲ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆԷԱԹՃԻԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ



Տեղական Հայ. օրաթերթերն վաղուց ծանուցին արդէն ամենախորին ցաւով Գերապատիւ Տ. Գրիգորիս Ս.

Արքեպիսկոպոս Անէաթճեանի մահագոյժը:

«Հանրագիտակ» ևս իբրեւ Հայ. Մամուլի ներկայացուցիչներէն մէկը, կուգայ իր ակումբ և վերջին պարտականութիւնը կատարել հանգէպ Ողբացեալ Սրբազանին, իր յարգանքը մատուցանել Անոր դագաղին, նուիրելով իր վերապահեալ տողերէն՝ Անոր յաւերժացած յիշատակին, որ գիտցաւ իր կեանքը օգտակարագէտ բեղմնաւորել, իբրեւ հանրային մարդ, իբրեւ Հայր ժողովրդին, իբրեւ Հայ Կղեր:

Տ. Գրիգորիս Սրբազան ծնած է Կ. Պոլսոյ Պալատ Թաղը, 1840 յունիս 30 ին: Իր ուսումն առած է նախ Պալատի և Գարակէօմիկի, յետոյ Սկիւտարի Ս. Խաչի վարժարանին՝ և ապա ձեմարանին մէջ, աշակերտելով Հինքեարպէյէյնտեան Տ. Յովհաննէս քահանայի և վանանդեցի Գրիգոր պատուելիին: 1863 Յունուարին հրատարակած է ԹԻՂՆԻԿ ՊԵՂԱՍԵԱՆ կիսամսաթերթը, որ առած է մինչև 1866 ապրիլ 10, Աշխատակցութեամբ Արմենակ Հայկունիի: 1864 ին թերթին հրատարակութիւնն ու խմբագրապետութիւնը Արմենակ Հայկունիի յանձնելով, ուսուցչութեան ասպարէզը գրկած է, և ուղեւորած է Կեսարիա, Ատանա, Սիս, Վան, Էրզրում, Երզնկա, Սըվազ: 1866 ին Աղթամարայ Տ. Խաչատուր նորընտիր կաթողիկոսէն վարդապետ կը ձեռնադրուի, և 67 ի վերջերը կրկին Պոլիս վերադառնալով քարոզիչ կըլլայ նախ Պալատի, յետոյ Եէնի գափուի եկեղեցին: 69 յունիս 13 ին Բաբերդի առաջնորդ կընտրուի, և տարի մ. ետքը՝ Ամենայն Հայոց արդի Հայրապետին Պատրիարքութեան օրով Բաբերդի և Երզնկայի միացեալ Վիճակին առաջնորդ կընտրուի, ուր կը մնայ մինչև 76: Ապա կը վերա-

դառնայ Պոլիս, և քանի մը ամիս ետքը Մուշ կ'ուղևորի, որու առաջնորդ ընտրուած էր: 77 ին Տարօնի եպիսկոպոս կը ձեռնադրուի Տ. Գէորգ Կաթողիկոսէն: 80 ին Պոլիս կուգայ և մինչև 85 Սկիւտար Ս. Խաչ եկեղեցին քարոզիչ կը կարգուի: 82 ին Ս. Խաչ եկեղեցւոյ զանգակատունը շինած է հանգանակութեամբ, որու մէջ իր բարոյական ծառայութենէն զատ կարևոր մաս մ ունեցած է, նոյն միջոցին իր ոսկի ժամացոյցը և մէկ մատանին աւանդ թողլով որոշեալ դումարի մը փոխարէն, զորս պարտաւորած է ծախել, պարտքը հատուցանելու համար: 85 ին Տ. Յարութիւն Ս. Պատրիարքի ջանքով կրկին Մուշ կը վերադառնայ իր առաջնորդական պաշտօնը շարունակելու: 86 ին վան կը զրկուի իբրև առաջնորդ և վանահայր վարագայ վանքին, ուր կը հիմնէ ժառանգաւորաց վարժարան մը: 88 ին կրկին Պոլիս կը վերադառնայ, և Սկիւտար Ս. Խաչ եկեղեցւոյ քարոզիչ կարգուելով, կը շարունակէ իր այս պաշտօն ցմահ:

Այսպէս ահա՝ Ալէաթեան Սրբազան օժտուած բնատուր ձիրքերով, իր աշխոյժով, գործունէութիւնով ու անշահախնդիր ոգով՝ բովանդակ կեանքը նուիրեց հանրութեան, առաջնորդ հանդիսանալով կրթական գործերու ուր որ ոտք կ'սխած է, չ'մոռնալով ձեռք կարկառել թշուառին, օգնել աղքատին, սփոխել այրին, ու իր հոգին աւանդեց սիրելով ու յիշելով որբերն ու վարագը, ուր յիշատակ մ'ունի իր դործն ու գործնական կեանքը անմահացնող: Այո՛, Ալէաթեան Սրբազան եթէ երբէք իբրև մարդ դոյզն տկարանքներ ունեցած է, իբրև հանրային տիպար-մարդ ալ լաւ դիտեցած է յաւետ յիշատակելի առաքինութիւններով սրբադործել իր կեանքը,

որոցմով անմուայութեան լուսապսակը հիւսեց իր ճակատին:

Ալէաթեան Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոսի ամբողջ կեանքը կրօնքի, հաւատքի, եղբայրսիրութեան ու առաքինութեան յիշատակարան մ'եղած է, որու առջևէն «Հանրագիտակ»ի խմբագրութիւնը ակնածանքով կ'անցնի, անոր յիշատակին նուիրելով իր յարգանաց ու համակրանաց տխրածօնը:

ՀՈԳԵԼՈՅՍ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՄԷԿ ՀԱՌԱԶԸ

Անցեալ չորեքշաբթի, սոթակէզ օր մը, Չամլըճայի ճամբէն կ'ելլեմ դէպի վեր թօրհանէ օղլու՝ Բիւրքէիսանլը-եանի բնակարանին մէջ տեսնելու համար ամէնուս սիրելի հիւանդը:

Մարդս վարկեաններ ունի ուր տեսակ մը նախազգացումով շատ կը տրտմի, իր աչքին առջև արեւն ալ նոյն փայլը չունի, ծաղիկը՝ նոյն գոյնը, թռչունը՝ նոյն երգը, տունը՝ նոյն հմայքը. ամէն բան կարծես կուլայ սեւ սուգի մէջ թաղուած:

Մտայ այդ ցաւի եւ հեծեծմունքի տունը, առաջնորդութեան սենեակ մը՝ լ'նչ կեղեքիչ տեսարան. իր անձնուէր քոյրերն ու քեռորդիները կը վազեն հոս ու հոն՝ քնատ եւ վհատ. սա՛ դէմքերը թրջուած մորմոքեցին սիրտս, եւ խորին լուութեան մէջ սկսայ ուրուագծել մեր սիրելի Սրբազանին կայտառ ու պարթեւ հասակը, խորունկ ու վճիտ նայուածքը, հազուագիւտ ժպիտը:

Խորհեցայ իր կատարած գործերուն վրայ եւ ըսի ինքնին, արդարեւ կեանքը պէտք է ըլլայ շարք մը բարիքներու, մանաւանդ կուսակրօնին կեանքը առանց առաքինութեան չունի ո՞ր եւ է հրապոյր, ո՞ր է քաղցրութիւն. իր եր-

շանկութիւնը հոգեկան բերկրանքի մէջ կ'գտնէ միայն:

Կեանքն ալօթքի, կեանքը հաւատքի, կեանքը համազման, կեանքը սկզբունքի» կեանքը կամքի և գործի. ահա՛ հանգուցեալ Սրբազանին նկարագիրը որ բարոյական մեծ արժանիք մը շինած է իրեն համար:

Ողջամիտ ժողովուրդը ճանչցած էր պայծառօրէն իր ախար-մարդը: Միշտ կը զբաւուէր անոր անունէն, երբ կը կարգար հրատարակուած հաշուեկշիռի մը ստորեւ:

Ո՞վ չը սիրեր հիւանդին մարդը, աղքատին նեցուկը, որբին մտերիմը, այրիին սփոփիչը: Այդ լուրջ դէմքը, արցունքոտ աչքերով կ'երեւար լուսապը սակով մը:

Այո՛, մարդուս գործերը կ'անմահացնեն զինք. գերագոյն բարին սահմանած է վերջին հատուցումը, որ կեանքի ամենէն բարձր դադարարն է:

Զէ՛, սիրտերը ծաղկիկի մը պէս չեն անցնիր. անշէջ շողիւններն ունին անոնք, հոգիի կեանքով կը տեւեն անոնք:

Այս մտածումներուն մէջ սուղուած էի, երբ լսեցի ցաւատանջ Սրբազանին մէկ խոր հաւատը, «Ա՛խ...» ու սկսայ լալ:

Յաւիտենականութենէն կուգար գողցես այդ բամբ ձայնը մահամերձ Սրբազանին. անդիի արձագանքը կուտարան, Յիշեցի Շորէնի «Մառչ՝ Թիւնէպոլն» և շա՛տ յուզուեցայ:

Մեռելոցին կը տանէինք զերեզման խունկի նման Սրբազանը գողգոթուն գուրգուրանքով մը. «Այսօր ժողովեալ Սրբոց»ը քաղցր կ'երգուէր. հասցա մարմնս երգը, «Իշխանք ժողովեցան ի միասին»ը. ի՛նչ տխրանոյշ կը հնչէր ականջներու՝ Պաղլար-Պաշըի հրապարակին վերայ: Ամենքնիս ալ կ'ողբայինք մեռելավայրին մէջ. սա՛ հողակոյտերուն

քով քչիկ մը վերջ նոր մը եւս բարձրացաւ, որ հովանաւտ հսկայ ծառի մը պէս պիտի հսկէ միւսներուն:

Ու կարծեցի լսել նոյն հնչիւն. «ախ»ը շերիմէն ալ:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴ:

ԺՈՂՈՎՐԴ: ԲԱՆԱՅԻՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՂՈՐԴ

[Պատգիւր Մշեցոց]

Անցեալ տա՛ւ մինչ մենք կը վարէինք «Բիւրուկն» ի խմբագրութիւնը, նոյն թերթին մէջ, 1898, էջ 395, վանեցոց մէկ պարբերգը (=Լողոր, Լուղորդ) հրատարակեցինք զոր ստորագրած էր Պր. Մ. Մկրեան: Սոյն պարբերգին մէկ ճոխ varianteը Մշեցոց գաւառաբարբառով, Մշոյ մէջ երգուած, այս անգամ հրատարակելով՝ «Հանրագիտակ»ի գաւառացի Պատ. Ընթերցողներէն կը խնդրուի որ եթէ իր ուրիշ մէկ varianteը կը գտնուի իրենց երկիրը, հաճին մեզի հաղորդել: Varianteներն ազգագրական վերալուծումներու եւ ժողովրդ. բանահիւսութեան Անգիր Դպրութեան տեսակէտով մեծ կարեւորութիւն ունին: Խնամքով բան հաւաքելու է, նոյն իսկ աննշան կարծուածները:

(Աղջիկը կ'առաջարկէ աղան կը մեքծէ)

— Բու ծամու ծանրութենից
Կաքաւն իրեն բոյն էր դրի,
Բու շուշբի զընկզընկալից
Կաքաւն առեր զձագեր թռի:

Դե՛հ հանայ, նանայ, նանայ,
Կլոր երես կառճկուկ ջանա,
Իմ՝ ծամկութ (') ծովն է ընկեր
Դե՛հ հասայ, նանայ, նանայ:

(*) Ծամկութ հիւսուած կայ

- Ձիմ թավլա գումէշ կի տամ
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ կ'ենեմ զթավլա գումէշ
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Ձիմ զըհէլ ձենաք կիտամ,
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ կ'ենեմ զգըհէլ ձենաք
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Ձիմ սուրի ոչխար կիտամ
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ կ'ենեմ զսուրի ոչխար,
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Ձիմ պապու գութան կիտամ
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ կ'ենեմ զպապու գութան
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Ձիմ մալ լու թամալ կիտամ
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ ընիմ զմաշ ու թամալ,
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Ձիմ ոսկի շարքեր կիտամ,
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ կ'ենեմ զոսկի շարքեր,
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Ձիմ ալմասդ մասնիք կիտամ
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ կ'ենեմ զալմասդ մասնիք,
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Ձիմ պինկէօլ աչքեր կիտամ,
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ կ'ենեմ զպինկէօլ աչքեր
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Ձիմ թուխ թուխ ընքուին կիտամ
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Ի՞նչ կ'ենեմ զթուխ թուխ ընքուիդ,
Ձիմ հաներ զծամկոթն ի ծովէն :
- Այսպէս աղջիկը կը շարունակէ թանկագին բաներ խոստանալով, ինչպէս

ձողիկ քթիկ, իր կարմիր երեսները, պղտիկ բերանը, վիզն ու կէրտանը, շամամսիկ ծծերը, պատ ու պալեղ, որպէս զի ծամկոթը ծովէն հանէ, բայց տղուն կողմէ կը մերժուի, մինչև որ Աղջիկը վստահեցնէ թէ՛

- Ձիմ սէրն ու սաւտէն կիտամ
Դէ՛հ հանէ զծամկոթն ի ծովէն :
- Քու սէր ու սաւտի համար
Կը հանեմ զծամկոթն ի ծովէն :

Այս պատճառը խոստովն առնելով տղան Արածանի գետի ծովանման ջուրերը մէջ կը նետուի Ծամկոթը ծովէն հանելու համար։ Աւանգութիւն մը կը ըսէ թէ տղան յաջողութեամբ Ծամկոթը ծովէն հանել ու իր փափագին հասնիլ։ Բայց Variante մըն ալ ասոր հակառակը կ'ըսէ, տղան ջուրերու հոսանքին դահգացել։ Տարաբախտ աղջիկը կ'երգէ սոյն պարերգ-սիրերգը Աստղիկան լուգարանը «Գուրգուռան»։

Այս առթիւ աւելորդ չենք համարեր Աստղիկան լուգարանի վրայ հակիրճ ազգագրական բացատրութիւն մը տալ։ Հանգուցեալ Գ. եպ. Սրուանձաեանց իր Դրոց ու Բրոցին մէջ, էջ 98, կ'աւանդէ թէ երբ Եփրատ (աւելի ճիշդէ ըսել Արածանի) Մշոյ գաջորը կը մանէ, Կընձան սարերու մէջ, զարնուելով քարերու, նեղ կը ճով մը սեղմուելով ԳՈՂԻՌ ԳՈՂԻՌ ձայն մը կ'արձակէ և այդ տեղ «ԳՈՂԻՌ-ԳՈՂԻՌ» կը կոչուի որ Աստղիկ լուգարան է եղեր։ Եւ քանզի Աստղիկ գիշերները լուացուելու սովորութիւն ունէր, Գաղճնաց սարէ վրայ մեծ կրակ կը վառէին տարվաւոր կարիճներ, առնոց լուսով կը գիտէին Աստղիկի չքնաղ գեղեցկութիւնը, ասկէ հնարուած է Աստղիկ մշուշ պատերէ այդ ամբողջ միջավայրը, այսինքն Մշոյ գաջոր ծագաց ի ծագս, թէ՛ ամառն թէ՛ ձմեռը։

Աստղիկան լուսացման պարագան կայ նաև Յունական Միթարանութեան մէջ։ Կիսլորոսի եզերքին մաս, Ափրոսիդէ գիցուհին դուրս կուգայ ալիքներէն, կ'իջնէ ցամաք եւ իր քնքոյշ ոտուրներուն տակ կ'աճի հրաշալի բուսականութիւն մը։ Ափրոսիդէ կը ներկայացուի ծովէն եկած իր կուսական ամօթխածութեան փայլով, մարմինը աղի ջրով ցողակաթ, իր աղնուական մերկութեամբ, ամփոռնքին վրայ ոլորելով իր խարտեաշ մազերը։

Գալով այս ազգագրական փշրանքի ինչ ինչ կէտերու վերլուծման, ինչպէս միուշ պատելը Տարօնի ամբողջ դաշտը եւ այս առթիւ քաղաքը Մուշ կոչուած, (Հմմտ. «Արեւելք», թիւ (359) յաջորդ թիւերով։

Գ. Խաչկունց

ՀՈՂԱԳԻՏԱԿԱՆ

ՄՈՒՐ, ՄՈՒԻՐ ԵՒ ՈՍԿՈՐ

Իբրեւ պարարտեցուցիչներ
մշակելի հողերու համար

(Ետք . 7) թիւն

Մոխիրը շատ կարեւոր պարար մ'է մասնաւորապէս կիր չը պարունակող կաւային խոնաւ եւ պղղ հողերու համար։ Գլխաւորապէս խոնաւ եղանակներու մէջ, աւազային եւ լեռնային երկիրներու համար զօրաւոր ազդեցութիւն մը կ'ունենայ մոխիրը։ Միախառնելով իւղաբեր տունկերու (ինչպէս կտաւատ եւն.), երեքնուկի (թիրֆիլ), բնական մարգերու, այգիներու մշակութիւն-

ներն են աւելի որ այս տեսակ հողերու մէջ կ'օգտուին մոխիրէն։ Իսկ պարտիպանները պէտք է վերապահեն մոխիրի գործածութիւնը, մասնաւորապէս ընդեղէններու մշակութեանց։ Ղոր օրինակ, ոլոռի (պէգէլիա), սիսեռի, լուրիաի, պաղլաի, եւն. Ասոնք տընկուած տունք եթէ խրաքանչիւր ածուի մէջ մէկ կամ կէս ամի մոխիր խառնենք հողին, վստահաբար սրբնելի արդիւնք մը կ'ստանանք։ Բայց չի մոռնանք ըսելու թէ, հողը պէտք է բաւական խոնաւութիւն ունենայ, եւ հունտերը թաղուելէն մէկ երկու օր առաջ դոնէ թարմ մոխիրը խառնելու է, որպէս զի իր կիզողական մասերը հալելով, ուժը կտրի քիչ մը։ հակառակ պարագային հունտին նորածիլ բողբոջը կ'այրէ։ Եթէ արտը ամբողջ պիտի մոխրուի, այն ատեն խրաքանչիւր տեղական արտավարի համար 100 քաշի չափ մոխիր կը տարածեն ու կը հերկեն։ Անգլիայի մէջ մինչեւ 150 քաշի չափ մոխիր կը տարածեն իրենց արտերուն կամ մարգագետիններուն վրայ։

Մոխիրը ոչ միայն մշակուած տունկերու աճումը կը գիւրացնէ, այլ եւ, եթէ մէկ քանի տարիներ շարունակ գործածուի միեւնոյն արտին վրայ, գէշ խոտերն ալ կ'ոչնչացնէ։

Իերքաղէն վերջ երբ արտին երեսը յարդ, կամ ուրիշ տունկերու կոթեր եւն. կը մնան, դանոնք ժողվելով տեղւոյն վրայ այրելու է, եւ մնացած մոխիրն ալ տարածելու է ամէն կողմ։

Սովորաբար թարմ մոխիրի տեղ (charrée, մոխիրջուրին տակը նստած մոխիրը) կը գործածեն. որովհետեւ հալող մասերը իրմէ դատուած ըլլալուն համար, ազդեցութիւնը այնչափ ուժգին

չըլլար, եւ տուններն ալ չ'այրիւր, ինչ որ շատ անգամ կը պատահէ թարմ մոխիրի հետ:

Ընտիր մոխրադիրտերը իրենց մէջ կը պարունակեն 10 առ 100 կիրի լուսածնատ (ֆոսֆատ տը շօ), եւ թարմ մոխիրի պէս ալ կը յարմարի ամէն տեսակ հողերու, եւ մասնաւորապէս կաւային հողերու: Նոյնպէս ամէն տեսակ մըշակութեան ալ կը յարմարի, եւ տարւոյն ամէն եղանակի մէջ ալ կրնայ գործածուիլ, բացի ձմրան անձրեւոտ եղանակէն: Գարնան առաջին օրերուն, կարելի է տարածել մարգերու կամ արօտներու վրայ: այգիները բահելու տեւն, իւրաքանչիւր որթատունկին տակ, գարիի, վարսակի, մարացորենի ցանքին տեւն: սիսեռի, սլոռի, բակլաի եւնի տնկարկութեան միջոցին: եւ աշնան ալ ցորենի եւ հաճարի ցանքին տեւն:

Գերմանացիք այնչափ կարեւորութիւն կ'ընծայեն մոխրադիրտի որ, շատ անգամ մեծ ծախքեր կ'ընեն մինչև արտերը կամ արօտները տանելու համար: Առաջին հասարակ ամէն տեսակ բոյսերու մըշակութեան կը գործածեն, եւ մասնաւորապէս ցորենի, գարիի, վարսակի եւ հաճարի մշակութեան: Այս կերպով անոնց հասոյթը կաւելնայ, թէ մեծ քանակով հունտ արտադրելով, եւ թէ յարգ: Մոխրադիրտին մէջ գտնուած լուսածնատը կը նպաստէ հունտերու աճումին, իսկ կալիի կայծքարատն ալ յարգի աճումին: Յարգը իր բաղադրութեան մէջ մեծ քանակով կալիի կայծքարատ կը պարունակէ: Այս տեսակէտով ամեն մոխիր հաւաար արժէք ու արդիւնք չ'են ունենար: Կաղնիի (մէշէ) մոխրադիրտը նուազ յարգի է, որովհետեւ շատ քիչ լուսածնատ կը պարունակէ: Փեկոնի (կիւրկէն) մոխիրը աւելի լաւ է:

Մոխրադիրտը սքանչելի պարար մէջ անջրդի արօտներու եւ մարգերու համար: Իր գործածութիւնով գրեթէ սովորական աղբի պէտքը չի զգացուիր, որովհետեւ անոր աղբեցութեան տակ տունկերը իրենց պէտք եղած անկենդանը երեսնուոր միջոցով կ'աճեն: Մէկ արտավար մարգագետին, առանց ունէ աղբի օգնութեան, կրնայ արտադրել միջին հաշուով 200 քաշ չոր խոտ, որու մէջ կը գտնուի 80 քաշ բնածուխ, 2 քաշուկէս անկենդան (աղօղ) եւ 14 քաշ ալ հանքային նիւթեր (մնացեալները թթուածին եւ ջրածին են): Խոտի այս քանակը կրնայ կրկնապատկուիլ եթէ յարմարադոյն ուղղութիւններ ըլլան, եւ կամ մոխրադիրտով պարարուին:

Եթէ քաղուած խոտերու միջոցաւ մարգագետիններէն պակասած հանքային նիւթերը կրկին անգամ հողին շի վերադարձնենք, տարուէ տարի մարգագետիններուն բարեբերութիւնը կը նըստազի:

Մարգագետիններու հողին այս արգասաբերութիւնը հաստատ պահելու եւ աւելցնելու ամէնէն ապահով եւ խնայողական միջոցն է, մոխրադիրտ տարածել անոնց վրայ: Որովհետեւ ինչպէս գիտենք հիմա, մոխրադիրտը իր մէջ կը պարունակէ բոլոր այն գոյեղները, զորս քաղուած խոտերը հողէն կորզիցին եւ տարին այլուր: Եւ ինչպէս վերը ըսինք, մոխրադիրտը բոյսերուն այն կարողութիւնը կ'ուտայ, որով կրնան օգին մէջ գտնուած բնածուխը եւ անկենդանը ծծել: Նկատողութեան առնելիք կարեւոր կէտ մ'է ասիկայ, որովհետեւ առանց ունէ գրամական փոխարինութեան, այդ բնածուխը եւ անկենդանը մարգագետիններուն մատակարարած պիտի ըլլանք:

Մոխրագիրտը հողերուն վրայ տա-
րածելու համար պէտք է որ չոր ըլլայ :
Ընդհանրապէս ձեռքով կամ հողաթիւով
(քիւրէկ) կը տարածեն : Երբ հողը ոչ
խոնաւ և ոչ ալ չոր է : Ոմանք մոխրա-
գիրտը տարածելէն անմիջապէս վերջ,
մանկեռով (թըրմըք herse) հողին կը
խառնեն, բայց սովորաբար ժամանակ
մը կը թողուն հողին երեսը, առանց
ծածկելու : Նկատողութեան տունելու է
որ, մոխրագիրտը ցանուելէն վերջը
եթէ չանձրել է և երկարատեւ երաշտու-
թիւն մը տիրէ, իր աղբեցութիւնը ա-
մուլ կը մնայ : Եւստի այնպիսի ժամանակ
մը ցանելու է որ, քիչ վերջը գոնէ անձ-
րեւ մ'ստանայ, ինչպէս դարնան սկիզբ-
ները, կամ աշնան վերջերը : Աւելի յար-
մարագոյն եղանակը գարունն է :

Մէկ արտավարի համար մոխրագիր-
տի միջին չափը 200 քաշ է :

Այս քանակը պէտք է աւելցնել կամ
պակսեցնել, հողին բնութեան և խոնա-
ւութեան աստիճանին համեմատ : Որչափ
հողը խոնաւ, կաշուն ըլլայ և քիչ կիր
պարունակէ, այնչափ մոխրագիրտի վե-
րոյնչեալ չափը պէտք է աւելցնել : Իսկ
ընդհակառակը՝ պէտք է նուազեցնել :
Որչափ հողը չոր, թեթեւ, աւաղային
ու կրային ըլլայ :

Մոխրագիրտի աղբեցութիւնը առ-
նուաղն 5 տարի կը տևէ : Ֆռանսայի
Նոռ Դաւառի կողմերը որ իւրաքանչիւր
արտավարի համար 250 էն մինչև 350
քաշ մոխրագիրտ կը տարածեն, աղ-
բեցութիւնը մինչև 10 տարի կը տևէ :
Պավիէւայի մէջ մինչև 600 քաշ մոխ-
րագիրտ կը տարածեն մէկ արտավա-
րի վրայ : Բայց աղբեցութիւնը կը տևէ
6 էն 8 տարի միայն :

Այս երկրի մէջ մոխրագիրտը կը վե-
րապահեն գլխաւորաբար կանճիրակի
(գօլզա) և գարբի համար :

Շատ անգամներ մոխրագիրտը ա-
ռանձին ու առանց աղբի կը գործածեն :
Բայց գիտնական հողագործները աւելի
աղէկ ճանչնալով անոր արժէքը և կիր-
արկութեան պարագաները, և մասնա-
ւորապէս երբ դիմետրականներու (ցորե-
նի, գարբի, վարսակի հաճարի ևն . բու-
ստանական անունը), ընդեղէններու
(լուրիա, բակլա, ոլոռն, սիսեռ ևն.),
ծխախոտի, կանճիրակի ևն . ի համար
գործածեն : անպատճառ աղբի հետ
խառն կը տարածեն արտին վրայ : Ո-
րովհետեւ լաւ հասկցած են որ, աղբի հետ
խառնելով, մոխրագիրտի աղբեցութիւ-
նը կը կրկնապատկուի, և այս խառ-
նուրդը հողին արգասաբերութիւնը
կաւելցնէ :

Այս երեսից թողութեան հասկը-
ցողութեամբ բացատրելու համար, ը-
սենք որ այդ խառնուրդին մէջ գտնուած
յօրինուածային նիւթերու (աղբը) ծակ-
տիկներուն մէջ ներմուծուած ալքալա-
լին նիւթերն՝ կիր, կալի, ևն, օգին
գործակցութեամբ բորակացումի երե-
ւոյթներուն կը նպաստեն, որու վրայ
երկար բացատրութիւններ տուած է ար-
դէն՝ Հանրագիտակի անձանձիր և յար-
գելի աշխատակիցը՝ Մովսէս Էֆ. Մա-
լաքեան, իր երկրագործական յօդուած-
ներուն մէջ :

Մոխրի և մասնաւորապէս մոխրա-
գիրտի կարեւորութեան վրայ մեր ըսած-
ները հաստատելու համար, յառաջ բե-
րենք Շըվարձի մէկ յիշատակութիւնը
որ օգտակարութենէ զուրկ չըլլար :

Բալթիկինայի գիւղերէն մէկուն հո-
ղերը այն աստիճան սպառած էին մը-
շակութեան գէշ դրութեան մը հետե-
ւանքով, որ լոյսը գիւղացիները կատար-
եալ անանկութեան հասած էին : Այդ
գիւղին մօտ ընդարձակ անտառներ կը
գտնուէին, հետեւաբար և փայտը չատ

աժան էր: Դիտնականներու խորհուրդով սկսան, արուեստի ու ճարտարարուեստի անօգտակար փայտերու մացառները այրելով մոխիր դարձնել, և ապա այդ մոխիրէն կալի (բողաս) պատրաստել: Կալին՝ իբրեւ գլխաւոր արտադրոյթ սկսան ծախել: Իսկ մնացած մոխրադիրտը գործածեցին: Իրենց արտերը պարտիելու:

Շար.

Ղ. ԲՈՒՍՏ

ՍԿԶԲՈՒՆՔ ԶԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱՌԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒՄ

❦❦❦

Տեսակային բառերու հետ բազդատմամբ՝ սեռային բառերու մտքին վրայ առաջ բերած արդիւնքը՝ մտաւայ առարկաներու աչքին վրայ առաջ բերած արդիւնքին կը նմանի: Ինչ որ հեռուէն կը տեսնուի՝ կը յարուցանէ հարցումներ որոնց կարելի չ'է պատասխանել, մինչև որ մարդ առարկային մերձենայ: Նոյնպէս ալ սեռային բառը կը թելադրէ հարցումներ որոնց տեսակային ծանօթութիւնը միայն կրնայ պատասխանել: Եթէ լսենք որ բարեկամներէն մին «մեծ բաղդի մը» տիրացեր է, այդ բաղդին բնութեանը նկատմամբ մութի մէջ կը մնանք, մինչև որ աւելի յստակ տեղեկութիւն ընդունինք տեսակային բառի մը միջոցով: Եթէ թերթի մը մէջ կարդանք թէ Զինաստանի մէջ բնիկներ օտարազգի միսիօնարներու դէմ «խժդժութիւններ» ի գործ դրեր են, մեզմէ իւրաքանչիւրը այդ խժդժութիւն բառին կուտայ մեկնութիւն

մը, և չ'ենք կրնար գիտնալ թէ այդ մեկնութիւններէն ո՛րը ճիշդ է, բայց երբ կարդանք թէ այդ բնիկները՝ միսիօնարներու տունները այրած ու ասոնց բնակիչները՝ մեծէն մինչև փոքր սուրէ անցուցած են, այն ատեն որոշապէս կը հասկնանք թէ ի՛նչ ըրած են չինացի բնիկներ: Եթէ մէկը ըսէ, «բարեկամ միութեան զոհ գնաց», շատ յստակ խօսք մը ըրած չ'ըլլար, զի «միութիւն» սեռային բառը ըլլալով՝ կրնայ նշանակել յոռի ունակութիւններէն ո՛ւրէ մին: սակայն եթէ սեռ ցուցնող միութիւն բառին տեղ տեսակ ցուցնող բառ մը գործածելով՝ ըսէ, «բարեկամ արլեցութեան զոհ գնաց», այլ ևս մեկնութեան հարկ չ'ի մնար:

Ըսուածներէն կը հետևի թէ՛ երբ գրող մը կ'ուզէ իր միտքը ճշգիւ հաղորդել, և մանաւանդ՝ եթէ կ'ուզէ իր ընթերցողները շահագրգռել, զգուշանալու է գործածելէ ո՛ւրէ բառ որ աւելի ընդհանուր է քան իր մտքին մէջ գտնուած առարկային անունը: Եթէ ձիերու վրայ կը գրէ, զանոնք «չորքոտանի» անուանելու չ'է, եթէ մանաւոր ձիու մը վրայ կը գրէ, զայն անոր անունով թող կոչէ, եթէ անուն ունի: Հարկ չ'ի կայ դաշնակը «նուագարան» անուանել, բահը՝ «երկրագործական պիտոյք», և հրացանը՝ «մահացու խոզովակ»: Եթէ կեղծ պատմութիւն մը կը յօրինէ, իր անձերուն ընդհանուր անուններ տալու չ'է, Պարոն —, Տիկին —, կամ Պարոն Ա., Տիկին Բ. ըսելով: այլ՝ հնարելու է սովորական անուններ, ու այս կերպով իրականութեան գոյն տալու է իր պատմութեան:

Սեռային բառերու գործածութիւն. — Վերև ըսուածներէն պէտք չ'է հետեցնել թէ սեռային բառերը խօսակցութենէ կամ գրութենէ վտարուելու

են. Սրդարե՛ անոնք անհրաժեշտ են լեզուի մը որ աւագ գործերու կը ծառայեն: Անոնք, մասնաւոր բան մը չ'ի հատ մեղաւորի վրայ ըլլալով, ընդհանուր ցուցնելով, հակիրճ ձևի մէջ կ'ամփոփեն իրերու բազմութեան մը յատկանիշները: Եթէ դասի անուն չունենալով, ամէն պարագայի տակ ստիպուէինք դասի մը անդամներուն թուարկութիւնն ընել, — եթէ, օրինակի համար, «աղբ» բառը չունենալով՝ ստիպուէինք ըսել Պրանսացիները, իտալացիները, ևլն, ինքզինքնիստ Լարիւրինթոսի մէջ պիտի գտնէինք:

Սեռային բառերը կրնան ծառայել իբրեւ միջոց հակառակութիւնը զինութեան ընելու, անհաճոյ իրողութիւնները սքողելու, լեզուի ճոխութիւնով՝ խորհուրդի աղքատութիւնը ծածկելու, ճարտարութեան երեւոյթ տալու մթութեան, և պատգամի արժանիք՝ ծանծաղարանութեան, բան մը կամ շատ բան ըսած ըլլալու երեւոյթին տակ՝ բան մը չ'ըսելու դիտաւորութիւնը ծածկելու: Սեռային բառերը կը վխտան քաղաքական կուսակցութեանց որոշումներու, երկրորդ աստիճանի քարոզներու և գալորցական շարադրութեանց մէջ:

Մեղմարանութիւն

Մեղմարանութիւնը՝ անհաճոյ իրողութիւն մը, յստակօրէն չանհատացնող բառերու տակ, քողարկելու փափաքէն կը ծագի յաճախ. ինչպէս՝

Մեկնիլ — մեռնիլ.

Առարկել գործ — ոճիր.

Յոռի ունակութիւն — գինովութիւն

Անկարգ վարմունք »

Հանրատուն — բողանոց

Յիշեալ փափաքէն առաջ կուգան կարգ մը անհարկի ընդհանուր բացատրութիւններ զորոնք կը գործածեն ամէն տեսակ մարդիկ, սկսելով ոճրագործէն

որ կուղէր իր ոճրին անունը տալ իր բառով՝ մինչև քարոզիչը որ, միաքը անհատ մեղաւորի վրայ ըլլալով, ընդհանուր կերպով կը հարուածէ միլիթիւնը: Ընդհանուր բառերը կը ծառայեն գոյծերը մեղմացնելու:

Տեսակային բառերու հետ բաղդատմամբ՝ ընդհանուր կամ սեռային բառերու համեմատութիւնը շարադրութեան տեսակին հետ կը զանազանի:

Իմաստասիրական գրքերու մէջ, օրինակի համար, ընդհանուր բառեր աւելի կը գործածուին քան պատմական կամ թատերական գործերու մէջ:

Պարսիզակ

Շար.

Ս. Գաապեան

ԱՐՅԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ



Մալկարաէն Գառնիկ էֆ. Քիւրքճեան հետեւեալ ֆռանսերէն արհեստական բառերու ցուցակը ղրկած է մեզ, որոց նշանակութիւնը կուզէ հասկնալ:

1. Alun de Rome. (2. Alun de roche.
3. Mine de plomb. (4. Litharge d'or. (5. Couperose verte. (6. Couperose blanche
- (7. Sumac. (8. Rouge d'Augleterre. (9. Verdet (cristallin). (10. Graine de carvi. (11. Macis. (12. Noix muscade. (13. Fève tonka. (14. Coriandre.

Գոհացուցիչ կերպով պատասխանած ըլլալու համար, պիտի ջանանք իւրաքանչիւր բառի նշանակութիւնը, կազմութիւնը, յատկութիւնը, գործածութիւնը՝ ըստ կարելոյն մանրամասնօրէն բացատրել:

1. Alun de Rome. (2. Alun de roche.
- Alun (ալէօն) Պաղերդ, տաճկ. շապ. Պաղերդը քիմիական տեսակէտով աղ

մըն է, որ կազմուած է հիմնապէս ծը-
ծմբական թթուութի (1), կալիի (2),
պաղլեղի (3), միացումէն. երբեմն ալ
կալիի տեղ անուշադր (4) կը գտնուի:
Ուրիշ կերպ ըսելով, պաղլեղը յառաջ
կուգայ երկու ծծմբական աղերու միա-
ցումէն, զք եւն. կալիի ծծմբատ (5)
կամ անուշադրի ծծմբատ (6). եւ պաղ-
լեղի ծծմբատ (7): Քանի որ երկու ծը-
ծմբական աղերու միացումէն յառաջ
կուգայ պաղլեղը, այս պատճառաւ
քիմիագէտները կը կոչեն զայն կրկնակ
ծծմբատ պաղլեղի եւ կալիի՝ կամ ա-
նուշադրի: Այս երկու վերջինները իրա-
րու տեղ կը դրուին, այսինքն՝ կամ
մին կը գտնուի կամ միւսը: Ինչպէս՝
կրկնակ ծծմբատ պաղլեղի եւ կալիի.
կամ կրկնակ ծծմբատ պաղլեղի եւ ա-
նուշադրի:

Պաղլեղի հիմը կը կազմէ պաղլեղիկը
կամ որ նոյնն է բնալեղիտը: Ասիկա
պաղլեղածինի կամ (բնալեղ) ի ժան-

«1» Ասիտ սիւլֆուրի — զան ետոր.

«2» բօրաս

«3» ալիւմին. (տեկ. նայնդէս ալիւմին
կը կոչեն:

«4» ամօնիա — նիշատըր բուհր.

«5» սիւլֆատ տր բօրաս.

«6» սիւլֆատ տ'ամօնիա.

«7» սիւլֆատ տ'ալիւմին

«8» օքսիտ ա'ալիւմինոս. այսինքն բնալեղի

եւ քրուածինի միացումէն յառաջ եկած բու-
հայրեայ մարմին մը: Վեր. Հ. Մ. Բաշուհի օք-
սիտ բաւրթ-ՈՒՌԻԿ կ'ամուսնէ քրուածին բու-
հէն առնելով: Այս մասին այժմ՝ բացատրու-
թիւն ապ մեզ շատ հետեւեալ տառերով, չենք
ուզեր երկարել. միայն կրնանք բնի քէ իր
կարծիքը նիշդ է. բայց քրուտ եւ քրուտի
իրարու հետ շփոթելուն, եւ ժանգ բառն ալ
մեր լեզուին մէջ գոյութիւն ունենալուն համար,
յարմար է՝ արդեօք ժանգոտութիւն. օքսիդ. օ-
xyder — ժանգոտել, oxydation — ժան-
գոտացում, եւայլն:

գուտն (8) է. Բնալեղն ալ պարզ մարմին-
ներու կարգէն մետաղ մ'է, եւ կը նը-
մանի ճիշդ արծաթի. թէեւ անկէ ար-
տասովոր կերպով թեթեւ է, բայց անոր
պէս կը հալի, կը դարձնուի: Այժմ գը-
տած են միջոցներ, որոցմով կարելի
կ'ըլլայ բաւական մեծ քանակութեամբ
արտադրել բնալեղը, որ կը դործածուի
կարգ մը արհեստներու մէջ, Բնալեղով
կը պատրաստեն ինչ որ կարելի է պատ-
րաստել արծաթով. խոհանոցի սաներ,
կաթսաներ, դգալ եւ այլ սպասներ,
ինչպէս եւ մեքենաներու շատ մը կտոր-
ներ եւն:

Բնալեղիտը (9) կը գտնուի մեծ քանա-
կութեամբ կաւային հողերու մէջ. եւ կաւի
բաղադրութեան մէջ կը մտնէ շատ մեծ
քանակով. այս պատճառաւ կաւային
հողերը տալիս կ'ըլլան, այսինքն երբ
բերան առնուին՝ կը փոթթեն:

Անցողակի բսենք որ բնալեղիտը այլ
եւ այլ նիւթերու հետ միանալով եր-
բեմն, յառաջ կը բերէ ազնիւ քարեր.
Ինչպէս՝ կորնդոն (Corindon, գըրմըզը
եագութ), կարկեհան (Rubis լէալ եւ-
գութ), արեւելեան տպաղիոն (Topaze
orientale «արը եագութ»), արեւելեան
շափիւղայ (Saphire oriental կէօք եւ-
գութ), շիթալին (Spinelle տամիա եւ-
գութ), եւն, եւն:

ԿԱԼԻԻ ՊԱՂԼԵՂ. — Այս պաղլեղը
փոթթոյ յատկութիւն մը ունի. պաղ-
լեղը իր ծանրութեան 15րդ մասը կը
հալեցնէ իր մէջ. այսինքն 15 քաշ պաղ-
լեղին մէջ 1 քաշ պաղլեղ կ'ընայ հալիլ.
Իսկ տաք ջուրին մէջ իր ծանրութեան
շատ աւելի:

Հարիւր մաս կալիի պաղլեղը իր մէջ
կը պարունակէ 36,85 մաս բնալեղիտի

«9» չի շփոթել բնալեղիտը բնալեղին հետ:

ծծմբատ (10), 18,15 կալիի ծծմբատ(11),
եւ 45 ջուր:

Եթէ 100 աստիճանէն վեր տաքցը-
նենք, նախ կը հալի, յետոյ իր բաղադ-
րութեան մէջ գտնուած ջուրը տակաւ
կը շոգիանայ, և ուռելով այլակերպ ձե-
ւեր կ'առնէ, թափանցիկութիւնը կը կոր-
սնցնէ, և այնչափ կը կարծրանայ, որ
այլեւս շատ դժուարութեամբ կը հալի
ջուրի մէջ: Պաղլեղը այս վիճակին մէջ
կը կոչուի կրացած պաղլեղ (12):

Եթէ մինչեւ կարմրելու աստիճան
տաքցնենք, այն ատեն կ'սկսի բաղա-
լուծուիլ եւ ծծմբային թթւութիւն հետ
խառն թթւութեան կարտայնդէ, մնա-
ցած դերտը կը բաղկանայ բնակչիտէ և
կալիի ծծմբատէ, որ ջուրի մէջ լուծ-
ուելով կրնայ բաժնուիլ:

Պաղլեղը առատօրէն կը գտնուի բը-
նութեան մէջ, գլխաւորաբար հրաբուխ-
ներու մօտ, հրաբխային երկիրներու եւ
կաւային հողերու մէջ, քարի պէս կարծր
կ'ըլլայ, մերթ բաց վարդագոյն, մերթ
եւս գորշագոյն կամ աղտոտ ճերմակ:
Այս վիճակին մէջ որ պաղլեղաքար (a-
lunite) կը կոչուի, գրեթէ չի հալեր, ո-
րովհետեւ բնակչիտի աւելորդ քանա-
կութիւն մը կը գտնուի իր մէջ: Պաղլե-
ղաքարէն պաղլեղը հանելու համար կը-
րակի վրայ կ'այրեն. 2-3 ամիս բաց օ-
դին կը թողուն, եւ այդ միջոցին յա-
ճախ վրան ջուր կը սրսկեն: Այդ ժա-
մանակէն վերջը ջուրի մէջ կը հալնցնեն
և տաքցնելով ջուրը կը շոգիացնեն,
մինչեւ որ բուն պաղլեղը մնայ: Ահա
այսպէս պատրաստուած պաղլեղին կը-

սեն՝ սառնակերպ պաղլեղ (alun de roche
գայա շապը):

Այս պաղլեղը շատ տեղեր կը գըտ-
նուի: Հին ատենները յարդի էին Պոլսոյ
և Հալէպի պաղլեղները, ինչպէս եւ
Հռոմի պաղլեղը (Ալէօն տը Ռոմ = Ռօմա
շապը): Այս վերջինը թեթեւօրէն վար-
դագոյն է, եւ սովորական պաղլեղներէն
քիչ մ'աւելի բնակչիտ կը պարունակէ
իր մէջ: Գոյնի կարմրութիւնը յառաջ
կուգայ իր բաղադրութեան մէջ գըտ-
նուած ջուրին մէջի փոքր քանակով եր-
կաթի ժանգուտէն: Հին ատենները երբ
այնչափ յարդ կ'ընծայէին այս եւ միւս
պաղլեղներուն, պատճառը այն է որ,
ուրիշ երկիրներու պաղլեղներէն աւելի
մաքուր եւ զուտ էին. բայց երբ ֆռան-
սացիք սկսան արուեստական պաղլեղ
պատրաստել, որ քիմիապէս զուտ եւ
մաքուր կ'ըլլայ, այլ եւս այն միւսնոյն
յարդը չունեցան:

Այս պաղլեղը կը գործածուի գլխա-
ւորապէս ներկարարութեան մէջ՝ պաս-
տառներու վրայ ներկերը հաստատելու
համար. և այս պատճառաւ է որ միշտ
զուտ և մաքուր պաղլեղ կը փնտռուի.
որովհետեւ իր մէջ գտնուած երկաթի
ժանգուտը որչափ ալ քիչ ըլլայ, կարգ-
մը փափուկ գոյներու երանգները կ'այ-
լայլէ:

Այժմ ներկարարութեան մէջ շատ
անգամ պաղլեղի տեղ կը գործածեն
պարզ բնակչիտի ծծմբատ, որ կը պատ-
րաստուի կաւէ և ծծմբական թթւութե-
ան: Ամէն կաւ սակայն յարմարութիւն չունի
պաղլեղի ծծմբատ պատրաստելու. գըլ-
խաւորապէս կը գործածեն «քաղէն»
կոչուած կաւը, որ գոյնով կաւիճի պէս
ճերմակ, կարծր կ'ըլլայ եւ աննշան
քանակութեամբ միայն երկաթ կը պա-
րունակէ: Այս կաւը կը գործածեն յախ-
ճապակիի պատրաստութեան:

«10» Սիւլֆատ տ'ալիւմին:

«11» Սիւլֆատ ար բօրատ:

«12» Ալէօն գալոլին:

«13» Այս պարագային կը գործածեն
յատկապէս Բարիզի պաղլեղը, որ բլանսպէս
մաքուր է:

Համառօտ կերպով ըսենք թէ ի՞նչ պէս կը պատրաստեն պաղլեղի ծծմբատը: Կաւը հնոցի մէջ կը տաքցնեն, մինչեւ որ մութ կարմիր դոյն մ'ստանայ: Ետոյ հնոցէն դուրս հանելով կը տրուեն, կը փոշիացնեն, և իր ծանրութեան կէսին չափ ծծմբական թթուութի հետ խառնելով, կրկին հնոցի մէջ կը դնեն ու կը տաքցնեն մինչեւ որ ծծմբական թթուութի արձակել սկսի: Այն ատեն հնոցէն դուրս կը հանեն, եւ մէկ քանի օր այս փիճակին մէջ թողլէ վերջը, ջուրի մէջ կը լեցնեն, որպէս զի կազմուած ծծմբատի բնալեզիտը հալի: Բայց որովհետեւ այս լուծոյթին մէջ փոքր ինչ երկաթի աղ կը գտնուի, որ ներկարարութեան վնասակար է ուստի կը յաւելուն կալիի խաժատ (սիանիւռ տը բօթատ) մինչեւ որ այլ եւս տակը չի նստի: Յետոյ կրակի վրայ կը շոգիացընեն մինչեւ որ օշարակային թանձրութիւն մ'ստանայ, այն ատեն կապարեայ ամաններու մէջ կը լեցնեն, ուր պաղլելով հաստատուն փիճակ մը կ'առնէ, որ մեր փնտռած պաղլեղի ծծմբատն է:

Պաղլեղը կը գործածեն նաեւ կենդանական նիւթերը փառութենէ պահպանելու համար: Կաշեգործները կը գործածեն, կաշիները արգնելու (շապլամաք), եւ շատ անգամ ալ իրենց մուշտակ ծառայող մորթերը արգնելու, որպէս զի մազերը չի թափին: Պաղլեղը կը գործածեն նաեւ ուրիշ շատ մը արհեստներու եւ ճարտարարուեստներու մէջ ալ: Ինչպէս՝ փայտը, կտաւը եւ, այրելէ զերծ պահելու համար, պաղլեղաջուրի մէջ կը թափխեն զանաւոր և կը շորցնեն: Կը գործածուի նաեւ բժշկականութեան և վիրաբուժութեան մէջ⁽¹³⁾ զոր օրինակ՝ լինդերբու եւ կոկորդի բորբոքումներու համար: Անցողակի ըսենք որ, պաղլեղի խաղաղալները (կառ-

կառա ընել) թէեւ օգտակար են կոկորդի բորբոքումներու համար, բայց ոչ թէ ցաւը սկսած ատեն, այլ 2-3 օր վերջը: Յաւը սկսած ատեն գործածելը վտանգաւոր է. որովհետեւ փոխանակ հանդարտեցնելու, աւելի կը սաստկացնէ: Կը գործածուի նաեւ աչքի մէկ քանի հիւանդութեանց մէջ. ինչպէս՝ փոշիացած պաղլեղը ջուրի մէջ լուծելով (100 տրամ ջուրի մէջ 3-4 տրամ պաղլելը): Խաղաղալներու համար ալ սովորաբար այս չափը կը գործածեն: Նոյնպէս պնդացուցիչ գրեխջուրի համար, վիրաւորուած տեղի մը արիւնը դադրեցնելու համար ալ այս լուծոյթը կը գործածեն, անով թրջած լաթ մը վրան դնելով, կամ նուրբ վրձինով վերքին վրայ քսելով: Քիթէն արիւն հոսած ատենն ալ այս լուծոյթէն քիթը կը քաշեն, որ շուտով արիւնը կը դադրեցնէ: Պաղլեղով շուփայները (collyre աչքի դեղ) կը պատրաստեն, 100 տրամ վարդեջուրի մէջ կէս կամ մէկ տրամ պաղլեղ հալեցնելով:

Կրացեալ պաղլեղը (այրած չապ), միւսէն աւելի աղդեցիկ է, եւ կը գործածուի գրեթէ միայն վիրաբուժական գործողութեանց եւ արտաքին հիւանդութիւններու մէջ:

ԱՆՈՒՇԱԴՐԱՅԻՆ ՊԱՂԼԵՂ. — Այս պաղլեղը միւս բնական պաղլեղին շատ կը նմանի իր բոյսը, յատկութիւններով: Երբ քիչ մը ջրով, կերով և կալիով մէկտեղ լոսենք, անուշադրի կծու հոտ մը կ'արձակէ: Այս պաղլեղը կը պատրաստեն ուղղակի անուշադրի ծծմբատի լուծոյթը բնալեզիտի ծծմբատի լուծոյթին հետ խառնելով:

Կը գործածուի կալիի պաղլեղի նման եւ միեւնոյն պարադաներու մէջ:

Հարիւր մաս անուշադրի պաղլեղը կը պարունակէ իր մէջ 38,885 բնալե-

դիտի ծծմբատ, 12,961 մաս անուշադ-
րի ծծմբատ, և 18,154 մաս ալ ջուր:
Շար. Ղ. ԲՈՒԱՏ

ԹԵՐԹՈՆ « ՀԱՆՐԱԳԻՏԱԿ », (20)

ԺԻՒԼ ՎԵՐՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԵՐ

Ժ. Բ.



Ամպամած օդով մը պիտի մեկնէինք.
բայց անփոփոխ մէկ խօսքով զբօսաշը-
ջիկի մը եղանակն էր, ոչ այնքան հեղ
ձուցիչ տաքութիւն մը և ոչ ալ սոսկալի
տեղատարափներ կային:

Անձանթօժ երկրի մէջ ձիով ճամբորդե-
լու հաճոյքը ըստ իս, մասամբ կը
դիւրացնէր մեր ձեռնարկութեան ըս-
կզբնաւորութիւնը, և գիտաշրջիկի մը
փափաքներով ու ազատութիւնով լեց-
ուած՝ անհուն երջանկութիւն մը կը
վայելէի, արդէն ես ալ անզգալաբար
սկսած էի գործին մէջ մաս մունենալ.
« Սակայն կ'ըսէի ինքնիրեն, ինչ բանէ
կը վախնամ ես ամենէն հետաքրքրա-
շարժ երկրի մը մէջ ճամբորդելէ, կամ
խիստ նշանաւոր լեռան մը հողերը մագ-
ցելով գաղաթը ելլելէ. և կամ ամե-
նէն գէշը՝ մարած խառնարանի մը յա-
տակը իջնալը չ'է. Յայտնի է որ Սաքնիւ-
ոէմ ալ ասիկէ զատ ուրիշ բան ըրած չէ.
Բայց եթէ ըսուի թէ գեանուղի մը կայ,
որու ծայրերը երկրիս կեդրոնը կը յա-
ն

գին ատոր չեմ հաւատար. սոսկ երեւա-
կայութիւն է և բացարձակապէս անկա-
րելի. Ուրեմն այս արշաւին մէջ ինչ
աղէկ բան որ գտնանք, իւրացնենք
առանց վարանելու: »

Այս խորհրդածութիւնները կատա-
րած ատենս, արդէն Ռէքեավիքէն մեկ-
նած էինք, Հանս, առջեւէն կերթար.
արագ, հաւառ: Իր և անընդհատ քայ-
լերով. բեռնաշարժ գրաստները իրեն
կը հեռեէին, և երբէք պէտք չ'էր զգար
զանոնք կառավարելու: Մօրեղբայրս և
ես անոնց ետեւէ՝ կերթայինք. շիտակը
ըսելու համար, մեր պզտիկ բայց կորո-
վի ձիերուն վրայ երբէք ազեղ չ'էինք
երևար:

Իսլանտան Եւրոպիոյ մեծ կղզի-
ներէն մէկն է, 1400 մըն տարածու-
թիւն և վաթսուն հազար բնակիչ ունի:

Աշխարհագէտներ չորս մասերու
բաժնած են զայն, և մենք կողմնակի
պիտի երթայինք կզգույն այն մասէն,
որ կը կոչուէր Սիւա-ուէսդի քառորդ-
երկիրը. այսինքն հարաւ — արեւմտեան
քառորդ-երկիրը, զոր տեղացիք Սըտ-
ուէսար ֆիօտարնիւ կ'անուանէին:

Երբ Ռէքեավիքէն մեկնեցանք, Հանս
ծովեղբերքէն յառաջանալ սկսաւ. վախտ
ու աղաղուն արօտատեղիներու մեջէն
կանցնէինք, որոնք կարծես զօրաւոր ճի-
գեր կը թափէին կանաչ երևելու համար,
բայց դեղնութիւնը աւելի վայլած էր
իրենց: Խստաքարի զանգուածներու
խորտ ու բորտ գաղաթները կարծես
արեւելակողմի մշուշներուն մէջէն հորի-
զոնին վրայ շուք տալ կը փորձէին.
սակ տեղ գաղաթներուն վրայ գտնուած
ձիւնի կտորներ ճապաղ լոյսը կեդրոնա-
ցնելով, հեռաւոր լեռանց արտեաններուն
վրայ կը ցլցանէին:

Սայրասուր սարերով կարգ մը լեռներ
անվեհեր կերպով ցցուած, գորշագոյն

ամպերը կը պատուէին և շարժող գոլոր-
շիններու վրայէն իրենց սարերը կը ցու-
ցնէին, երկինքի մէջ ընկղմած խութե-
րու պէս:

— Ընդհանրապէս այս երաշտ ու
անբերրի ապառաժներու շղթաները դէպ
’ի ծով կ’երկարածգէին հրուանդանի մը
պէս, և իրենց ոտքերով արօտաանդի-
ները կը քերէին, բայց միշտ բաւական
տեղ կար անցնելու:

Մեր ձիերը ընդդմամբ յարմարա-
գոյն վայրերէն կը յառաջանային, և
առանց իրենց գնացքը դանդաղեցնե-
լու, Մօրեղբայրս իւր ձին ձայնով կամ
խարաղանով գրգռելու միտքաբութիւ-
նըն ալ չէր վայելէր: Երբ հետեւ արգիւ-
ռած էր իրեն անհամբերութեան ու է
ցոյց մ’ընել: չէի կրնար խնդուքս բռնել,
այդ խոշոր մարդը տեսնելով այդքան
փոքր ձիու մը վրայ, որուն ոտքերը
դրեթէ գետինը կը քերէին, և ճ ոտք
բարձրութեամբ մարդածիու (Centaure)
մը կը նմանէր: Ծար:

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն

Շնորհակալութեամբ կը ծանուցանէ
Խմբագրութիւնս որ, Ատաբաղարցի Կա-
րապետ էֆ. Սեմիդեան մէկ օրինակ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿ կը նուիրէ Ազգ. որբա-
նոց-արհեստանոցի մը, որու ընտրու-
թիւնը սեղ թողած ըլլալով, մենք ալ
յարմար դատեցինք Բաղէշի Խնդրակա-
տար Ս. Աստուածածնայ վանուց որ-
բանոց-արհեստանոցին շրջել:

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Տպարանական կարգադրութիւննե-
րու եւ կարեւոր տնօրինութիւններու
պատճառաւ ՀԱՆՐԱՊԵՏԱԿ չը պիտի հը-
րատարակուի երկու շաբաթի չափ:

Ս Ա Ն Ա Ս Ա Ր Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն
ԺԹ. ՏՄԵՆՇՐԶԱՆ 1899—1900

Վարժարանիս ԺԹ. տարեշրջանը կը
սկսի յառաջիկայ (1899) սեպտեմբեր 1ին
և նորեկ աշակերտներու մուտքի ըննու-
թիւններ տեղի կ’ունենան օգոստոս 30
ին և 31ին, իսկ դասերը կանոնաւորա-
պէս կը սկսին սեպտեմբեր 1ին:

Թոշակաւոր աշակերտներու ընդունե-
լութեան պայմաններուն և ուրիշ տեղե-
կութեանց համար ծնողք կամ պաշտ-
պաններ կրնան հիմակուքնէ դիմել Պո-
լիս՝ Ազգ. Պատրիարքարան և կամ Էր-
զրում վարժարանին անսչութեան:

Յառաջիկայ տարուան համար ձրի
աշակերտներուն ընդունելութիւնը ար-
դէն կատարուած ըլլալով, այդ մասին
” և է դիմում առանց հետեւանքի
պիտի մնայ:

ԿՆԻՔ ՍՍՆԱՍՍՐԵՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Վ Ր Ի Պ Ա Կ

Ներկայ թուոյս 1145 էջի Ա. սիւնակի
21րդ տողին մէջ «կեանքի» բառը պէտք
է կարդալ «կրօնքի»:

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

(م. لومات) طاهر بك مطبعة سنده طبع اولتشد

